

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# «ՕՐԱԳՐԵՐԸ» ԵՎ ԿԱՖԿԱՅԻ ԳՈՅԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Արա Առաքելյան

*Երևանի պետական համալսարան*

**Ի**նչպես հայտնի է, 20-րդ դարի ավստրիացի ականավոր գրող Ֆրանց Կաֆկայի գրական ժառանգության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում «Օրագրերը»: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Օրագրերում» Ֆ. Կաֆկան ներկայացնում է տագնապի, վախի, պարադոքսի ու արքայի այն նույն աշխարհը, որը մեզ արդեն ծանոթ է նրա պատմվածքներից, վեպերից, նամակներից ու աֆորիզմներից:

Հոդվածում հիմնական ուշադրությունը դարձված է երկու խնդրի: Նախ դիտարկվում են փիլիսոփայական ավանդույթի հետ գրողի ունեցած առնչությունները, ապա՝ բուն գոյափիլիսոփայության հարցերը: Ընդգծվում է այն հանգամանքը, որ Կաֆկան ինտելեկտուալ գրող է, մշտապես կապված փիլիսոփայական մտքի մեծերի՝ Սոկրատի, Չենոնի, Պլատոնի, Կանտի և հատկապես Շոպենհաուերի ու Նիցշեի հետ: Իբրև Կաֆկայի գոյափիլիսոփայության հիմնահարցեր մեկնաբանվում են ազատությունը, ճշմարտությունը, վախը, փախուստը, պարադոքսը, մարդ-աստված հարաբերությունների խնդիրները:

**Բանալի բաներ.** կենսափիլիսոփայություն, էկզիստենցիալիզմ, ապրելու տառապանք, արքայի, պարադոքս, փիլիսոփայական ավանդույթ, ազատություն, ճշմարտություն, փախուստ իրականությունից:

## Ներածություն

20-րդ դարի եվրոպական մոդեռնիզմի պատմության մեջ Ֆրանց Կաֆկայի (1883-1924) անունը գրեթե մշտապես ներկայացվում է Մարսել Պրուստի և Ջեյմս Ջոյսի անունների հետ: Անսովոր և անգամ այսօր էլ իր թարմությունը չկորցրած նրա արձակի անկապտելի մասն են կազմում օրագրերը, որոնք ոչ միայն գրողի, այլև եվրոպական գրականության կարևոր էջերից են: «Օրագրերում», որը գրվել է 1910-1923 թվականների ընթացքում, հեղինակը գրական-ստեղծագործական և ինքնակենսագրական բազմաթիվ խնդիրների հետ բացահայտում է նաև իր ինտելեկտուալ աշխարհը:

## «Օրագրերը» և փիլիսոփայական ավանդույթը

Կաֆկայի ստեղծագործական անհատականության երկրորդ կարևոր կողմը (գրականությունից և արվեստից հետո) փիլիսոփայությունն է: Սնունդ առ-

ներով և ձևավորվելով գերմանահրեական միջավայրում, նրա մտածողությունը ձեռք է բերում ընդգծված փիլիսոփայական ուղղվածություն: Դա իր արտահայտությունն է գտնում գրողի ստեղծագործության մեջ, գեղարվեստական երկերում (անուղղակի արտահայտություն), «Օրագրերում», նամակներում և հատկապես «Աֆորիզմներում» (ուղղակի արտահայտություն)՝ պայմանավորելով դրանցում մարդու գոյության խնդիրների անընդհատ և բազմակերպ արծարծումը: Բայց այս հանգամանքը հիմք չի կարող հանդիսանալ Կաֆկայի ստեղծագործությանն իբրև փակ և ամբողջական փիլիսոփայական համակարգի մոտենալու համար: «Կաֆկայի գործերի փիլիսոփայական հիմքը, – գրում է Ի. Սվիտակը, – աշխարհի մասին մարդկային փորձառության բաց համակարգ է, այլ ոչ թե մտածողի աշխարհայացք» (“Franz Kafka” 1973:378-379): Նույն կարծիքին է Բ. Նագելը. «Կաֆկայի նպատակը և խնդիրը ոչ թե այն է, որ ապացուցի ինչ-որ տեսություն, այլ՝ որ մեզ տրամադրի տեսակետ» (Nagel 1986:86): Այսինքն, Կաֆկայի փիլիսոփայությունը տեղավորվում է կենսափիլիսոփայության շրջանակներում և հետապնդում հատկապես ստեղծագործական նպատակներ: Կաֆկայի գոյափիլիսոփայությունը հնի և նորի համադրության արդյունք է: Նրա մտածողության արմատները մի կողմից հասնում են հնադարի խորքերը, մյուս կողմից կանգնած են 20-րդ դարի ամենաազդեցիկ փիլիսոփայական համակարգի՝ էկզիստենցիալիզմի սկզբնավորման ակունքներում: Կաֆկայի անձնական գրադարանում Պլատոնի ստեղծագործությունների կողքին պահպանվում են Կ. Մաքսի, Ֆ. Շլայերմախերի, Ս. Կյերկեգորի, Ֆ. Նիցշեի, Բրենտանոյի գրքերը (Nagel 1986:27): Սուկրատեսյան «Ճանաչիր ինքդ քեզ» և «Եղի՛ր այն, ինչ ես» կարգախոսները, Ջենոնի ապորիաները, Մարկոս Ավրելիոսի իմաստասիրական ինքնաքննությունները Կաֆկայի մտածողության ոչ միայն ազդակներն են, այլև՝ կայուն դոմինանտները:

Կաֆկայի վրա հատկապես մեծ է 18-19-րդ դարերի գերմանական իդեալիստական փիլիսոփայության ազդեցությունը: Կենսագիրները (Մ. Բրոդ, Կ. Վազենբախ) վկայում են Կաֆկայի մեծ հետաքրքրությունը առանձին փիլիսոփաների նկատմամբ (Կանտ, Շոպենհաուեր, Նիցշե, Բրենտանո, Դիլթեյ): Անկասկած, նա լավ գիտեր մասնավորապես Շոպենհաուերի ստեղծագործությունը, որից ստանում էր ոչ միայն իմացական սնունդ, այլև՝ գեղագիտական հաճույք: «Շոպենհաուերը, – ասում է Կաֆկան, – լեզվի վարպետ է: Դրանով որոշվում է նրա մտածողությունը: Նրան պետք է կարդալ հենց միայն լեզվի համար» (Janouch 1962:102): Իսկ Նիցշեի ստեղծագործությանը Կաֆկան տեղյակ էր դեռևս դպրոցական տարիներից: Ուսանողական տարիներին այս փիլիսոփայի նկատմամբ հետաքրքրությունը հետզհետե վերածվում է հոգևոր խոր մտերմության (Ries 1977:70): Ամենայն հավանականությամբ, ինչպես են-

թաղրում է Կ. Վագենբախը, հենց Նիցշեի ազդեցության տակ են ծվել 1904 թ. գրված նամակի տողերը. «Ես կարծում եմ, որ պետք է կարդալ միայն այն գրքերը..., որոնք խայթում են և կծում: Եթե գիրքը, որ մենք կարդում ենք, մեզ չի արթնացնում զանգիմ բռունցքի հարվածով, այդ դեպքում ինչու՞ ենք կարդում այն» (Wagenbach 1996:40-41): Նիցշեից Կաֆկայի կրած ազդեցությունները ևս էական են և սկզբունքային: Գրողի ստեղծագործության մեջ տեսանելի է Նիցշեի «Աստված մեռած է» հանրահայտ արտահայտության արձագանքը: Ուսումնասիրողները որոշակի կապ են տեսնում Կաֆկայի առակների և Նիցշեի դիցաբանական նիհիլիզմի միջև (Politzer 1992:139): Դա վերաբերում է ինչպես անտիկ, այնպես էլ Աստվածաշնչյան թեմաների մշակումներին ու անդրադարձներին, օրինակ, Աբրահամի առասպելի արծարծումներին: Նրանց միավորում է նաև իրականության և ճշմարտության ճանաչման կիրքն ու հուսահատությունը, որ մի դեպքում հանգում է նիհիլիզմի (Նիցշե), մյուս դեպքում՝ պետիմիզմի և աբսուրդի (Կաֆկա): «Ապրելու անհնարինության՝ Կաֆկայի դրույթը, – գրում է Բ. Նագելը, – Նիցշեի դրույթն է» (Nagel 1977:29):

Շատ է խոսվում էկզիստենցիալիզմի և Կաֆկայի կապերի մասին: Առանձին ուսումնասիրողներ նրան համարում են անգամ այդ փիլիսոփայության հիմնադիրներից: Սակայն, ինչպես փիլիսոփայական մյուս համակարգերին նրա պատկանելության պարագայում, այս դեպքում ևս կարծիքները հակասական են: «Կաֆկայի ժառանգության գնահատման ամենամեծ սխալը այն է, – գրում է Ի. Սվիտակը, – որ մենք Կաֆկային ուղղակի դասում ենք էկզիստենցիալիստ հեղինակների շարքը...» (“Franz Kafka” 1973:379): Նույն կարծիքն է արտահայտում Ի. Հենելը: Վկայակոչելով վերջինիս կարծիքը, Բ. Նագելը գրում է. «Թեև Կաֆկայի մտածողության մեջ նա (Ի. Հենելը՝ Ա.Ա.) տեսնում է էկզիստենցիալ հանգամանք, բայց միաժամանակ ցույց է տալիս, որ նա քիչ ընդհանուր բան ունի Հայդեգգերի և Սարտրի փիլիսոփայական էկզիստենցիալիզմի հետ» (Nagel 1986:92): Ըստ Ի. Հենելի, Կաֆկային Հայդեգգերից բաժանում է վերջինիս միստիցիզմը, իսկ Սարտրից՝ հասարակական-քաղաքական հնչեղությունը: Կաֆկան շատ ավելի մոտ է էկզիստենցիալիզմի մյուս խոշորագույն դեմքին՝ Կ. Յասպերսին, որովհետև երկուսն էլ մարդուն (նույնն է թե՛ էկզիստենցիալիզմը) չեն կարող պատկերացնել առանց այնկողմնային էության:

Կաֆկան փիլիսոփա է, բայց նախ և առաջ՝ գրող փիլիսոփա, հետևաբար իմաստասիրական բարդ և խրթին գաղափարների, տեսությունների մեկնաբանմանը հետամուտ չէ: Նրա համար կարևորը մարդկային գոյի և կեցության հիմնախնդիրներն են, որոնք մտքի բնական ճյուղավորմամբ առնչվում են գոյաբանական ամենատարբեր և հիմնարար այլ հասկացությունների հետ: Թեև

Կաֆկան բոլորովին ինքնուրույն մտածող է..., Մ. Բրոդի կարծիքով, այս մտածողի արտահայտչաձևը գրականությունն է (Brod 1968:144):

Պատմելով, պատկերավոր լեզվով փիլիսոփայելը, որ Կաֆկան համարում է հրեական ազգային բնավորություն, նույնպես նրան մոտեցնում է Շոպենհաուերին և Նիցշեին: Դա նրա արձակին հաղորդում է խորհրդավորության և գաղտնագրության շունչ: «Դա այլաբանություն է, որին անհրաժեշտ է բանալի, – գրում է Թ. Ադորնոն, – յուրաքանչյուր նախադասություն ասում է՝ մեկնիր ինձ և ոչ մեկը չի ուզում համբերել» (Adorno 1986:304-305):

### **«Օրագրերը» և գոյաբանական հարցերը**

Կաֆկայի համար գիտակցության յուրաքանչյուր հանդիպում գոյության փաստի հետ անխուսափելիորեն ուղեկցվում է ողբերգական ընկալմամբ: Այդ գիտակցությունը առավել խորանում է, երբ գոյության ճանաչման ճանապարհին մարդը հանդիպում է նաև գաղտնիքի հետ: Իրականության և գաղտնիքի իմացության ընթացքը ուղեկցվում է ոչ թե ճանաչման հրճվանքով, այլ վախի ընդհանրացմամբ:

Կաֆկայի համար օբյեկտիվ իրականություն գոյություն չունի, այն միշտ հարաբերական է՝ կախված անհատի ընկալումից: «Օրագրերում» ժամանակի, տարածության, ինչպես նաև հեղինակային *ես*-ի գիտակցությունը երկակի է: Լինելով մարդկային որոշակի *ես*-ի՝ Կաֆկայի արտահայտությունը, այն միաժամանակ բովանդակում է ընդհանրական գծեր: Այն իրականությունը, որի մասին խոսում է Կաֆկան, կոնկրետ մարդկային փորձի արդյունք է, «հենց հիմա» և «հենց այստեղ» ընկալված իրականություն, որն անկրկնելի է ու եզակի: Այն ունի յուրահատուկ կառուցվածք: Անձնական ճշմարտության, պատկերացումների ու երազների դրոշմը կրելով հանդերձ՝ ունի մերկ հավանականության բնույթ, քայց ոչ նմանություն արտաքին իրականությանը: Դա իռացիոնալ իրականություն է, իրականության անհատական կոմպոզիցիա, որտեղ յուրաքանչյուր միավոր և փաստ իր սովորական, առօրեական իմաստից զատ կրում է նաև երկրորդական, երրորդական իմաստներ: Կաֆկան կարծես իր կյանքի օրինակով հաստատում է, որ գոյության վեջնական իմաստը մահն է: Նրա համար ապրելու տարածքը և ժամանակը, որքան էլ որոշակի, այդուամենայնիվ հասցված են բացարձակի սահմաններին, քանի որ իր ապրած որոշակի ժամանակը և տարածությունը նույնացվում են մարդկության ապրած ժամանակի ու տարածության հետ: Այդ իրականության մեջ պատճառահետևանքային կապերը սոսկ արտաքին-մակերեսային նմանություն ունենալով՝ գրեթե միշտ կրում են պատմական-առասպելական-ընդհանրական բնույթ՝ «Մենյակիս մեջ փակված է համաշխարհային պատմությունը» (Kafka 1951:359): *Ես*-ի կամ ժամանակի ընկալումը կատարվում է ոչ միայն հորիզո-

նական, այլև ուղղահայաց կտրվածքով, այսինքն, իր մաքուր ընկալման մեջ Կաֆկայի ես-ը կամ ժամանակը նույնացվում են, ասենք, Սոֆոկլեսի ես-ի և ժամանակի հետ: Կաֆկան դատավճիռ չի կարդում իրականությանը, ըմբոստություն չի ապրում, այլ սառը գիտակցությամբ արձանագրում իրականության փակուղին: «Օրագրերում» Կաֆկայի հերոսները, ինչպես և ինքը, ապրում են վախի, մահվան, մեղքի և պատժի սահմանային վիճակներում: Տեսանելի իրականության սահմաններից և շրջանակներից դուրս գալու ենթագիտակցական մղումը Կաֆկայի գոյափիլիսոփայության ընդգծված կողմերից է:

Տառապանքը, ըստ Կաֆկայի, միակ կապն է այս աշխարհի և դրական գիտակցության միջև: Սակայն նրա հաշտությունը կեղծ է, քանի որ ծնվում է անզորությունից և ոչ թե՛ գիտակցաբար: «Ճշմարտությունը այս է. – գրում է Շոպենհաուերը, – մենք պետք է լինենք դժբախտ և դժբախտ ենք» (Шопенгауер 1997:77): Կաֆկան նույնպես իրականության սահմաններից և գոյության ծանրությունից անելանելիության գիտակցությունը համարում է բնությամբ տրված, որի շնորհիվ մենք կարողանում ենք շրջանցել այն հարցերը, որոնց պատասխանը անհնար է ստանալ: Մտածող Կաֆկան, կատարելապես ապրելով փախուստն իբրև ելք («Փախուստը մարդկանց միջով դեպի ոչ մարդկայինը Կաֆկայի էպիկական ճանապարհն է» (Adorno 1995:312-313), միաժամանակ խոստովանում է. «Փրկվել՝ փախչելով նվաճված երկիր, բայց քիչ անց այն համարել անտանելի, քանզի փախչելով չես փրկվի» (Kafka 1951:360):

Անհատի և իրականության երկմիասնական անխուսափելիությունը հաշտության հետ մեկտեղ բերում է նաև բացասական հոգեբանության առարկայացում, այն է՝ օտարացում, հուսահատություն, երկվություն, մենակություն և վախի ընդհանրացում. «Կաֆկայի գործերում, – նշում է Թ.Ադորնոն, – ոչ մի տեղ չի վերջանում անվախճան գաղափարի աուրան, ոչ մի տեղ չի բացվում հորիզոնը» (Adorno 1995:303):

Կաֆկայի գրականությունը և փիլիսոփայությունը հատկապես առնչվում են «օտարացում» հասկացության հետ: Ժամանակակից զանազան հանրագիտարան-ներում նրա ստեղծագործությունը հիշատակվում կամ քննվում է ամենից հաճախ *օտարացում* հասկացության շրջանակներում: Օտարացումը, որի մասին խոսում էին լուսավորիչները՝ Գյոթեն, Շիլլերը, Ֆիխտեն, Հեգելը, Մարքսը, 20-րդ դարասկզբին դարձավ անհատի և հասարակության դեմքը ուրող գրեթե հիմնական չափանիշը: Այդ երևույթի առավել ամբողջական արտահայտությունը Կաֆկայի գրականությունն է: Ըստ Կաֆկայի՝ օտարացումն ընկած է հասարակության և մարդու գործունեության հիմքում՝ առօրեական կենցաղից մինչև արվեստ:

Կաֆկան «Օրագրերում», «Աֆորիզմներում» և ինքնակենսագրական մյուս նյութերում խոսում է նաև ճշմարտության, ազատության, կյանքի նպատակի,

ճանապարհի, երջանկության և գոյափիլիսոփայության այլ կարևոր հասկացությունների մասին: Օրինակ, ժխտելով մարդու համար երջանկության և նրան հասնելու գաղափարը, այդուհանդերձ պարադոքսալին մտահանգման միջոցով Կաֆկան կարողանում է ստեղծել երջանկության ճանապարհի պատրանք. «Տեսականորեն գոյություն ունի երջանկության միայն մեկ կատարյալ հնարավորություն, հավատալ իր մեջ ինչ-որ Անխախտելիի և չձգտել դեպի այն» (Kafka 2012:37): Դա նշանակում է՝ ունենալ Բաբելոնի աշտարակը կառուցելու հնարավորություն, սակայն մի պայմանով, եթե «աշտարակի վրա ոչ ոք չի բարձրանա» (նույն տեղում,14): Կյանքի ձևերի վրա իշխող Առեղծվածը («Դու առաջադրանք ես...», նույն տեղում,16), ճակատագրական նախասահմանվածությունը («Որսկան շները դեռ խաղում են բակում, բայց որսը նրանցից չի փախչի, որքան էլ որ այս ու այն կողմ նետվի անտառում» նույն տեղում, 25), ինչպես նաև Անելանելիությունը («Թաքստոցներին թիվ չկա, անթիվ են, փրկությունը միայն մեկի մեջ է, սակայն փրկության հնարավորությունները նույալես այնքան են, որքան թաքստոցներինը» (նույն տեղում, 30) աղավաղում են ազատության պատկերացումը և այն վերածում տարտամ նպատակի:

Անհրաժեշտ է նշել, որ երջանկության, ազատության, նպատակի, ճանապարհի ինչպես նաև տառապակից լինելու հասկացությունները շատ ավելի ամբողջական մեկնություն են ստանում Կաֆկայի կրոնական գիտակցության համակարգում, որովհետև ուղղակիորեն առնչվում են Աստծո գաղափարի հետ:

### **Եզրակացություն**

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արտաքուստ անմեղ և միամիտ այնպիսի ժանրին, ինչպիսին օրագիրն է, Ֆրանց Կաֆկան հաղորդում է գեղագիտական այն բոլոր առանձնահատկությունները, որոնք բնորոշ են առհասարակ իր արձակին, այսինքն՝ ինտելեկտուալ և փիլիսոփայական լրջություն, պարադոքսալություն, էկզիստենցիալ գծեր, վախի, տագնապի, անելանելիության տրամադրություններ:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Adorno, Th. (1995) *Prizmen*. Frankfurt am Main: Taschenbuch Verlag.
2. Adorno, Th. (1995) *ÄsthetischeTheorie*. Frankfurt am Main: Taschenbuch Verlag.
3. Brod, M. (1968) *Unzerstörbare*. Stuttgart: Kohlhammer Verlag.
4. (1973) *Franz Kafka*. Darmstadt: Wissenschaftliche Buchgesellschaft Verlag.
5. Janouch, G. (1962) *Gespräche mit Kafka*. Frankfurt am Main: Fischer Verlag.

6. Nagel, B. (1986) *Franz Kafka und die Weltliteratur*. München: Winkler Verlag.
7. Nagel, B. (1977) *Franz Kafka und Goethe*. Berlin: Schmidt Verlag.
8. Politzer, H. (1992) *Franz Kafka, der Künstler*. Frankfurt am Main: Fischer Verlag.
9. Ries, W. (1977) *Transzendent als Terror*. Heidelberg: Lambert Schneider Verlag.
10. Wagenbach, K. (1996) *Franz Kafka*. Reinbek bei Hamburg: Rowohlt Verlag.
11. Шопенгауер, А. (1997) *Избранные произведения*. Ростов на Дону: Феникс.

## ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Kafka, Fr. (1951) *Tagebücher, Fischer Verlag*. Frankfurt am Main.
2. Кафка. Фр. (2012) *Афоризмы*. Санкт-Петербург: Азбука-Классика.

### “Diaries” and Kafka’s Existential Philosophy

As is known, “Diaries” occupies a prominent place in the 20th-century Austrian writer Franz Kafka’s literary heritage. Research claims that Franz Kafka recreates the world of anxiety, fear, paradox and absurdity already familiar to us from his short stories, novels, letters and aphorisms.

The paper focuses mainly on two issues. First, the connection between the writer’s work and the European philosophical tradition; secondly, basic issues of existential philosophy as such. The paper emphasizes the fact that as an intellectual writer, Kafka is inextricably linked with the outstanding European thinkers of the ancient times: Socrates, Zeno, Plato, and Schopenhauer and Nietzsche in particular.

### “Дневники” и философия бытия Франца Кафки

Как известно, в творческом наследии выдающегося австрийского писателя 20-го века Франца Кафки особое место занимают “Дневники”. Исследования показывают, что в “Дневниках” Франц Кафка воссоздает тот же мир тревоги, страха, абсурда и парадокса, уже знакомый нам по его рассказам, романам, письмам, афоризмам.

В статье основное внимание уделено двум проблемам. С точки зрения верного осмысления и передачи темы, во-первых, рассматривается связь творчества писателя с европейской философской традицией; во-вторых, – вопросы экзистенциальной философии как таковые. Подчеркивается тот факт, что Кафка – интеллектуальный писатель, неразрывно связанный с выдающимися мыслителями Европы с ее античных времен; – Сократом, Зеноном, Платоном и в особенности, Шопенгауэром и Ницше.